ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ (1915–1924թթ.)

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Գաղտնիք չէ, որ ցանկացած պատերազմ, ռազմական գործողությունների իրականացում, մանավանդ, երբ այդ ամենը զուգորդվում է տարբեր ազգերի և ժողովուրդների բնաջնջմամբ, ուղեկցվում է ոչնչացման ենթակա էթնիկական խմբի ողջ ունեցվածքի բռնագրավման գործընթացով: Արդի միջազգային իրավունքը նմանատիպ հանցագործությունների կատարման հետ է կապում նյութական պատասխանատվության կրումը, որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում (ռեստիտուցիա), վնասների և կորուստների փոխհատուցում (ռեպարացիա՝ տոկոսների համարժեքով և հավելումով), ընդ որում, ինչպես ամբողջ ազգին կամ ազգային խմբին պատճառած բարոյական վնասի հատուցմամբ՝ տնտեսական գնահատմամբ: Այս առումով, պատմական ամենամեծ անարդարություններից է հանդիսանում Առաջին համաշխարհային պատերազմի (1914–1918թթ.) ընթացքում և այնուհետև շարունակաբար իրականացված Հայոց ցեղասպանությունը, ոճիր, որը նույնիսկ ինը տասնամյակ անց չդարձավ ո՛չ միջազգային-իրավական, ո՛չ էլ միջազգային-տնտեսական դատապարտման առարկա: Հիրավի, ոճիրը ուղղված էր հայ տարրի ֆիզիկական և քաղաքական բնաջնջմանը, նրա սեփականության բոլոր ձևերի հափշտակմանը, և դրան ուղղված գործողությունների համար պատասխանատվությունը պետք է կրեին ոչ միայն պետություն կազմող ժողովուրդը և պետությունն ինքը, այլև բոլոր այն «օտար պետությունները, բանկերը և մասնավոր անձինք, ովքեր յուրացրել են ցեղասպանության օբյեկտ դարձած ժողովրդի կողոպտման պտուղները»[1]:

Ահա այդ օտար պետություններից մեկի՝ Անգլիայի, նրա ֆինանսական հաստատությունների, բանկերի և մասնավոր անձանց կողմից յուրացված հայերի բռնազավթված ունեցվածքի խնդիրն է, որ ներկայացնում ենք գիտական լայն շրջանակների քննարկմանը այն բանից հետո, երբ հինգ ամիս հնարավորություն ունեցանք աշխատելու Մեծ Բրիտանիայի արխիվային հաստատություններում՝ հավաքագրելով և ուսումնասիրելով խնդրո վերաբերյալ բազմաթիվ անհերքելի վավերագրեր: Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ անհնարին է Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ցանկացած պատմական անցուդարձի օբյեկտիվ լուսաբանումը առանց նրա և

---

1 *Ց ո ւ. Բ ա ր ս ե ղ ո վ. Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը (ռեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ). Երևան, 1999, էջ 3–4:*

վերջինիս գաշնակից կայսերական Գերմանիայի արխիվային փաստաթղթերի օգտագործման: Ուստի մենք նույնպես օգտագործել ենք վերոհիշյալ սկզբնաղբյուրները, թերևս, առանց որոնց անհարին կլիներ մեկնաբանել, մինչ օրս բավարար չափով գիտական շրջանառության մեջ չմտած, ինչպես Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության բացակայության առեղծվածը, այնպես էլ հայերից թալանված, իսկ հետագայում Մեծ Բրիտանիայի կողմից անարդարորեն առդրավված 5000000 թուրքական ոսկե ֆունտի ճակատագիրը:

1915թ. մայիսի 27-ին թուրքական կառավարությունը մամուլում հրապարակեց տեղահանման մասին ժամանակավոր օրենքը, առանց թուրքական պառլամենտի ընդունման (թուրքական պաշտոնական պատմագրության կեղծ վարկածի համաձայն, օրենքն իբր թե ընդունվել է 1915թ. սեպտեմբերի 15-ին)[2]: Դրան զուգահեռ՝ 1915թ. հունիսի 10-ին պառլամենտի քննարկմանը հանձնվեց այսպես կոչված «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը[3], որը պարունակում էր ցուցումներ «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ կայքի» հետ վարվելու մասին[4]: Իրավացի է Վ. Տատրյանը, երբ այն բնութագրում է որպես «էվֆեմիստիկ արտոնագիր թալանելու և ուրախությամբ յուրացնելու զոհաբերվող ազգաբնակչության կուտակած հարստությունը»[5]: Օրենքը պառլամենտին խաբելու միջոցով ընդունվեց 1915թ. սեպտեմբերի 13-ին (հին տոմարով՝ 26-ին). նմանօրինակ այդ փաստաթուղթը թույլ էր տալիս բռնագրավելու տեղահանված հայերի «լքյալ» ունեցվածքը, անդամ բանկային հաշիվները: Օրենքի ուժ ստացած այս անօրինականությունը գտավ իր ընդդիմախոսներին նույնիսկ թուրքական պառլամենտում: Այսպես, ստորին պալատի անդամ Ահմեդ Ռիզան, որն ընդհուպ մինչև 1918թ. բողոքներով բաղմիցս հանդես էր եկել հենց նույն պառլամենտում, հայտարարել էր. «Ոչ ոք իրավունք չունի վաճառել իմ ունեցվածքը, եթե ես չեմ կամենում: Դա արգելված է Սահմանադրության 21-րդ հոդվածով: Եթե մենք ունենք սահմանադրական իրավահամակարգ, որը դրծում է սահմանադրական իրավունքին համապատասխան, ապա՝ չենք կարող դա անել: Կամայականություն է: Բռնել ինձ, վտարել իմ գյուղից, հետո վաճառել իմ ունեցվածքն ու սեփականությունը, նման բան երբեք չի կարող թույլատրվել: Դա չի կարող թույլ տալ ո՛չ դիտակցությունը, ո՛չ օսմանյան իրավունքը»[6]:

Այն, որ պատերազմող Թուրքիայի ֆինանսական ողջ համակարգը կախված էր դաշնակից կայսերական Գերմանիայից և ահռելի ծախսեր պահանջող պատերազմը մասամբ մղվում էր ցեղասպանության դատապարտված հայ ժողովրդի ունեցվածքի հափշտակման և դրա վաճառքից ստացված միջոցներով, տակավին 1915թ. վերջերին հայտնի էր անգլիացիներին:

---

2 Նույն տեղում, էջ 5:

3 V a h a k n N. D a d r i a n. The Complicity of the Party, The Government, and the Military Select Parliamentary and, Judicial Documents.– "Journal of Political and Military Sociology". Vol. 22, № 1, p. 29.

4 Ց ո ւ. Բ ա ր ս ե ղ ո վ. Նշվ. աշխ., էջ 5·

5 V a h a k n N. D a d r i a n. Նշվ. աշխ.:

6 Նույն տեղում, էջ 50:

Դա ապացուցվում է դեկտեմբերի 24-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ու. Լանգլիի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին և ֆինանսների նախարարին ներկայացրած «Թուրքիայի ֆինանսական կացությունը» վերնագիրը կրող զեկուցագրից: Փաստաթուղթը ստացվել էր Օսմանյան կայսերական բանկի Կ. Պոլսի կառավարչից, իսկ տեղեկությունը Թուրքիայից հնարավոր էր դարձել դուրս բերել բանկի վտարված իտալացի աշխատակիցներից մեկի միջոցով: Փաստաթղթում խնդրանք էր արտահայտվում չհիշատակել այդ ամենին մասնակից դարձած որևէ անձի անուն: Այնտեղ մասնավորապես ասված էր. «Օսմանյան կառավարությունը հուլիս ամսին թողարկեց 5000000 թուրքական ֆունտ արժողությամբ դանձապետական պարտամուրհակներ: Այս պարտամուրհակներն ապահովագրված են ոսկով դեպոզիտագրված (պահ տրված)՝ Բեռլինում և Վիեննայում: Միևնույն ժամանակ, գերմանական կառավարությունը Բեռլինում օսմանյան կառավարության տրամադրության տակ է դրել 1500000 թուրքական ֆունտ, որպեսզի այն վճարի Գերմանիայի զինագործական ձեռնարկություններին՝ կատարված պատվերների համար:...Ինչ վերաբերում է օսմանյան պաշտոնական պարտքին, բանկը ստացել է հետևյալ տեղեկությունը, որը ցույց է տալիս, որ գերմանացիները չահագործում են Թուրքիան՝ բացարձակապես իրենց սեփական շահերից ելնելով»: Թուրքիայի 750000 ֆունտ պարտքը Դոյչե բանկին (Deutsche Bank) մարվեց 450000 ֆունտի չափով, իսկ մնացած 300000-ը պետք է վճարվեր «այն բանից հետո, երբ հնարավոր լիներ հավաքել գա նահանգներից»: Բանկի կառավարչի կարծիքով՝ այն հերթական դործոնը, որն առաջնորդելու էր Թուրքիային դեպի անխուսափելի սնանկացում, դա կառավարության որդեգրած հայաջինջ քաղաքականությունն էր: Օսմանյան բանկը հայերի նկատմամբ իրականացրած կոտորածներում կորցրել էր իր աշխատակիցներից 25-ին, և միայն մեկ հայի էր հաջողվել, այն էլ անձամբ Թալեաթին հգված խնդրագրի շնորհիվ, ազատվել անխուսափելի մահից: Թե ինչպես էր իրականացվում վերը հիշատակված պարտքի մարումը, կառավարիչը նույնպես նկարագրում է՝ համոզիչ և անհերքելի փաստերով: «Հայերի ունեցվածքի հարկադիր վաճառքը տակնուվրա է արել ամեն ինչ: Միայն Էրզրումում 400000 ֆունտ արժողությամբ ապրանքը վաճառվել է (աճուրդի միջոցով) 20000 ֆունտով, միևնույն ժամանակ ոչնչացվել են հայերին պատկանող ձեռնարկություններ, ջուլհակահաստոցներ և այլ պարագաներ և, հետևաբար, արդյունաբերական կյանքը կանգ է առել»[7]: Թե ինչպես էր կատարվում ալան-թալանը և ինչպիսի նշանակություն ուներ այն Թուրքիայի քաղաքական կյանքում, կարելի է դատել Յոհանես Լեփսիուսի 1915թ. Թուրքիա կատարած հերթական այցելության ժամանակ արտաքին գործերի նախարարությանը հղած հետևյալ հաղորդագրությունից. «Այն ժամանակ, երբ մահմեդական բոսնիացիներին Զեյթունի տեղահանված շրջաններում բնակեցման համար կառավարության կողմից հատկացվել էր 20000 ֆունտ, հայերը զրկվել էին ունեցվածքից և

7 FO 371/2492/File № 197980.

առանց միջոցների արտաքսվել պանդխտության»[8]: Աճուրդի առարկա էր դարձել ոչ միայն նյութական բարիքը, այլև մարդկային կյանքը: Թուրքական կառավարության կողմից Բեռլինում պահ տրված 5000000 թուրքական ոսկե ֆունտը հավաքագրված էր նաև հայ կանանց և մանուկների վաճառքից, այսպես. «12-ից 14 տարեկան հայ աղջնակն արժեր 2 մեջիդեից 1 ֆունտ (թուրքական)»[9]: Անգլիական հետախուզության տվյալներով, միայն Մարգինում և Դիարբեքիրում կողոպտվել էր 6000000 թուրքական ֆունտ արժողությամբ ակնեղեն, գորգեր, հնաոճ իրեր և 1500000 թուրքական ֆունտ արժողությամբ ոսկի: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Դիարբեքիրի նահանգապետը, Կ. Պոլիս գնացքով տեղափոխել էր ոսկերչական իրերով 48 արկղ և թանկարժեք քարերով լի երկու սնդուկ[10]: Օսմանյան Թուրքիայի գլխավոր դաշնակից համարվող կայսերական Գերմանիայի կառավարությունն, իհարկե, լիովին քաջատեղյակ էր Բեռլինում պահ տրված ոսկե հաշվեհամարի ծագման աղբյուրների մասին: Եվ եթե գերմանական կառավարությունը, ելնելով իր քաղաքական և տնտեսական շահերից, պետք է լռությամբ հետևեր դաշնակից Թուրքիայի վայրագություններին, ապա նույնը չէր կարելի ասել գերմանական բազմաթիվ մասնավոր ձեռնարկությունների մասին, որոնք գործում էին Թուրքիայում, գլխավորապես՝ Արևմտյան Հայաստանում: Այսպես, Կիլիկիայում գործող Գերմանա-լեվանտական բամբակի ընկերությունը խիստ բողոք ներկայացրեց Ագանայի գերմանական հյուպատոսությանը թուրքական կառավարության կողմից իր պարտատեր հայերի բռնագաղթի և, մասնավորապես, նրանց ունեցվածքի բռնագրավման և վաճառքի վերաբերյալ: Ձեռնարկությունը Թուրքիայում իր գործունեությունը ծավալելուց հետո, վերջին մի քանի տարում, կարողացել էր բամբակի արտադրությունը 40000-ից հասցնել տարեկան 100000 հակի: Այն լայնորեն օգտագործում էր հայ գյուղացիների վարկավորման մեթոդը և չէր կարող չընդվզել «այն միջոցների դեմ, որի հանգամանքներում պետք է տեղի ունենար պարտատեր հայերի ունեցվածքի օտարումն ու յուրացումը»: Կից վաստաթղթում ֆինանսական հաշվետվության մեջ բերվում է ֆինանսական կորուստների մանրամասն հանրագումարը՝ 1628626 թուրքական լիրա, որ կրել էր ձեռնարկությունը հայերի բռնագաղթի կազմակերպման և ունեցվածքի առգրավման հետևանքով[11]: Մեկ այլ՝ Կ. Պոլսում Գերմանիայի գեսպան Հոհենլոե-Լանդենբուրգին Գերմանական արևելյան բանկի կողմից հղված նամակից պարզ է դառնում, որ բանկը կրում է ահռելի կորուստներ իր կողմից վարկավորված և այնուհետև բռնագաղթված և ֆիզիկապես բնաջնջված հայերի մահվան արդյունքում[12]: Գերմանիայի ռայխսկանցլեր Բետման-Հոլվեգին ուղղված զեկուցագրի մեջ Կ. Պոլսում հավատարմագրված գերմանական դեսպան Մետերնիխը, ի մի բերելով

8 В. А. Микаелян. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919).— Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Ереван, 1995, с. 188.

9 FO 371/2783/File № 242528

10 Ձ ո ւ. Բ ա ր ս ե ղ ո վ. Նշվ. աշխ., էջ 8:

11 В. А. Микаелян. Նշվ. աշխ., էջ 199–203:

12 Նույն տեղում, էջ 220–221:

Թուրքիայի ողջ տարածքից ստացված հաղորդագրությունները, նշում է, որ հայ պարտատերերի անհետացման կամ սնանկացման հետևանքով, գերմանական ընկերությունների կրած կորուստները և վնասը «կազմում են՝ Գերմանական բանկինը՝ 1500000, Մերձավոր-արևելյան բանկինը՝ 2000000, Գերմանա-լեվանտական բամբակի ընկերությանը՝ 500000, Անատոլիական առևտրային ընկերությանը՝ 20000 մարկ»[13]:

Գերմանական ձեռնարկությունների և ֆինանսական կազմակերպությունների կրած նյութական ողջ վնասը 1915թ. և 1916թ. առաջին եռամսյակի տվյալներով գնահատվում էր շուրջ 5000000 գերմանական մարկ[14]:

Ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի մեծ մասը, Թուրքիայի և վերջինիս դաշնակիցների վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով, զրկվեց ոչ միայն բազմադարյա պատմության ընթացքում կուտակած նյութական միջոցներից, այլ նաև իրեն իսկ «դաշնակից» համարվող Անտանտի տերությունների կողմից ակնկալվող օժանդակություն ստանալու հույսից, տերություններ, որոնցից մի քանիսը հետագայում, Եռյակ համաձայնության պետությունների պարտությունից հետո, մասնակից գարձան նրանից թալանված ունեցվածքի յուրացմանը:

Ցեղասպանության իրականացման ողջ ընթացքում ոչ միայն Մերձավոր Արևելքի որոշ երկրներ, այլ նաև Արևելյան Հայաստանն ու Անգրկովկասը հեղեղված էին հարյուր հազարավոր հայ գաղթականներով, որոնցից շատերը սովամահ էին լինում: Եվ այդ օրերին, հայ ժողովրդի «դաշնակից» Անգլիայում որոշ անհատներ փորձեցին կառավարության միջոցով մասնակից լինելու տարագիր հայերի փրկության կազմակերպման գործին: Բրիտանա-հայկական կոմիտեի նախագահ լորդ Ջեյմս Բրայսը 1915թ. սեպտեմբերին վարչապետին հղած նամակում, ներկայացնելով միայն Թիֆլիսում և նրա շրջակայքում կուտակված հարյուր հազարավոր «բացարձակապես ընչազուրկ, հիվանդություններից և սովից մեռնող» հայ գաղթականների վիճակը, օգնություն կազմակերպելու համար կառավարությունից աղերսում էր 40000 անգլիական ֆունտ ստեռլինգի հասնող նվիրատվություն[15]:

1916թ. փետրվարին Լոնդոն հասավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի հայ գաղթականներին օգնելու ռուսական կառավարության առաջարկը, որը փոխանցվեց անգլիական կառավարության քննարկմանը Մեծ Բրիտանիայում հավատարմագրված Ռուսաստանի դեսպան կոմս Բենկենդորֆի միջոցով[16]: «Ռուսական և անգլիական կառավարությունները պետք է հավասարապես կիսեն Թուրքիայում հայերի օգնության համար հատկացված 1000000 ֆրանկ նվիրատվությունը»[17]: Ընդ

---

13 Նույն տեղում, էջ 325, (Հայոց ցեղասպանության հետևանքով կրած նյութական կորուստների չափը որոշելու համար մեծ նշանակություն ունի տվյալ շրջանի տարբեր երկրների արտարժույթի փոխարժեքի իմացությունը, այդ առումով անհրաժեշտ է նշել, որ մեկ թուրքական ոսկե ֆունտը հավասարազոր էր գրեթե 18 գերմանական մարկի. տե՛ս նույն տեղում, էջ 384):

14 Նույն տեղում, էջ 325:

15 FO 371/2488/File № 123491.

16 Ա. Ն ա ս ի պ ե ա ն. Բրիտանիա եւ Հայկական հարցը (1915-1923). Պէյրութ, 1994, էջ 83:

17 FO 371/2768/File № 35658/folio 396.

որում, անգլիական կառավարությունը պետք է հատկացներ 20000 անգլիական ֆունտ ստեռլինգ[18]: Ֆինանսների նախարարության կողմից արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյին փոխանցված նամակում Ջոն Բրէդբըրին նշում էր, որ «քանի գեռ չի ծագել քաղաքական կարևոր շահագրգռվածություն, իրենք ազգային շահերի տեսանկյունից կասկածելի են համարում» այն ճանապարհը, որով առաջարկվում էր օժանդակել հայերին[19]: Հենվելով կառավարության, ֆինանսների և իր նախարարության համատեղ կարծիքի վրա արտաքին գործերի նախարարի տեղակալ Ջ. Լոկոկը, կոմս Բենկենդորֆին հղած պատասխան նամակում մերժեց «փոքր ազգերի ազատագրության համար կռվող» Մեծ Բրիտանիայի կողմից հայ տարագիրներին չնչին նյութական միջոցներով օժանդակելու առաջարկությունը, պատճառաբանելով այդ այն «հրատապ ու անհետաձգելի աղերսագրերով, որոնք ուղղվում են ֆինանսների նախարարությանը, կարիքից մահացող բրիտանացի և դաշնակից երկրների հպատակների կողմից»[20]:

Ճշմարտությունն այն է, որ Թուրքիայի դեմ մղված պատերազմի ընթացքում անգլիական կառավարությունը ոչ մի լումա չհատկացրեց անգամ մեկ հայի փրկության համար: Կառավարությունը ոչ միայն մերժում էր իր միջոցներից գումար հատկացնել, չեշտն ուղղելով Անգլիայում գործող հայանպաստ հասարակական կազմակերպությունների գործունեությանը, այլ նաև մասամբ խոչընդոտում էր նույնիսկ անգլիական մասնավոր ընկերությունների կողմից մինչ պատերազմը հայերի նկատմամբ ստանձնած ֆինանսական և նյութական պարտավորությունների կատարմանը: Խոսքը վերաբերում է Օսմանյան Թուրքիայի ողջ տարածքում գործող կյանքի և ունեցվածքի ապահովագրման մի շարք ընկերությունների գործունեությանը: Դրանք գլխավորապես ամերիկյան էին, կային նաև ֆրանսիական և անգլիական տարբեր ընկերություններ: Ինչպես օրինակ անգլիական Գրեշամ (Gresham) և Սթար Աշուրանս (Star Assurance Company) ապահովագրական ընկերությունները:

Դեռևս 1916թ. նոյեմբերին Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն (որը մինչ Թուրքիայի դեմ ԱՄՆ պատերազմի մեջ մտնելը համատեղության կարգով ներկայացնում էր նաև Մեծ Բրիտանիայի շահերը) Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը հղած հաղորդագրության մեջ նշում է, որ Սամսունի ամերիկյան հյուպատոսական աշխատակցից ստացել է համոզիչ ապացույցներ այն մասին, որ ցեղասպանության ժամանակ զոհված Հովակիմ Գևորգի Մասաթյանը հասցրել էր ապահովագրել իր կյանքը 3000 ֆրանկ գումարով անգլիական Սթար Աշուրանս ընկերության հետ կնքված № 114645 պայմանագրով: Ամերիկյան դեսպանը միաժամանակ խնդրում էր անգլիական իշխանություններին, զոհված անձին հասանելիք գումարը վճարել ցեղասպանությունից մազապուրծ եղած նրա որբացած երեխաներին:

---

18 Ա. Ն ա ս ի պ ե ա ն. նշվ. աշխ., էջ 84 (այստեղից կարելի է ենթադրել, որ մեկ անգլիական ֆունտ ստեռլինգը 1916թ. սկզբին առկա արտարժութային փոխարժեքով հավասար է եղել 25 ֆրանսիական ֆրանկի):

19 FO 371/2768/File № 35658/folio 396.

20 FO 371/2768/File № 35658/folio 397.

Էդուարդ Գրեյի անունից արտաքին գործերի նախարարի տեղակալ Հարոլդ Նիկոլսոնը առևտրի նախարարին հղած նամակում գրում էր, որ անգլիական ապահովագրական ընկերությունները պետք է ձեռնպահ մնան ցանկացած փոխհատուցման գումարի վճարումից, քանի որ «... բռնագաղթված հայերի մահվան առնչությամբ ներկա պայմաններում որևէ բացարձակ ապացույց չի կարող ներկայացվել» Հ. Նիկոլսոնի նամակը պետք է փոխանցվեր Լոնդոնում ամերիկյան գեսպան Վ. Փեյջին[1]: Նամակում Հ. Նիկոլսոնի արտահայտած այս կարծիքը հետագա տասնամյակների ընթացքում ընկավ Անգլիայի կողմից ոչդեգրած հայերի նկատմամբ ստանձնած պարտականությունների ուրացման խորխորատը: Հենվելով առևտրի նախարարի տեղակալ Հ. Մ. Վիներալսի կարծիքի վրա՝ Հ. Նիկոլսոնը, ԱՄՆ դեսպանին ուղղված պատասխան նամակում նշում է, որ պատերազմի ընթացքում արգելվում է որևէ գումար վճարել այն անձին, որը հանդիսանում է թշնամի երկրի քաղաքացի: Նա հնարավոր էր համարում վճարել ապահովագրական պայմանագրով նախատեսված գումարը միայն այն անձին, որն Անգլիայի մշտական բնակիչ էր, կամ նախքան պատերազմը բնակվել էր այնտեղ: Վերջում Հ. Նիկոլսոնն ավելացնում էր. «Ուստի, ապահովագրական ընկերությանը չի թույլատրվում որևէ գումար վճարել Մասաթյանի երեխաներին, անգամ, եթե քննարկվող ընկերությունը ցանկություն ունի ապահովավճարելու մահը»[2]:

Ալբիոնը պատերազմում էր Թուրքիայի դեմ՝ վերջինիս լծի տակ հեծող «փոքր ազգերի ազատագրման համար»: Եվ ահա այդ գործին իր բուռն ավանգը ներգնող հայը վերածվել էր «թշնամի քաղաքացու»: Մամուլի էջերում և պառլամենտում բազմիցս դեմագոգիկ հայանպաստ հայտարարություններով հանդես եկող անգլիական կառավարությունը նույնիսկ մասնավոր ընկերություններին խոչընդոտում էր կատարել իրենց իսկ կողմից ստանձնած պարտականությունները:

Անգլիական արխիվները լեցուն են նախքան Առաջին աշխարհամարտը հայերի հետ կնքած կյանքի ապահովագրման նմանատիպ պայմանագրերով, որոնցով ստանձնված պարտավորությունները երբեք կյանքի չկոչվեցին ո՛չ պատերազմի ժամանակ և ո՛չ էլ պատերազմի ավարտից հետո:

Անգլիայի և Թուրքիայի միջև 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված զինադադարով ազդարարվեց Առաջին համաշխարհային պատերազմում վերջինիս պարտությունը[3]: Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության, հայ ժողովրդի համար կենսական հիմնահարցերը տեղափոխվեցին Փարիզի խորհրդաժողով, մեծ տերությունների միջև շարունակաբար ընթացող երկարատև բանակցությունների և տարբեր կոնֆերանսների ու պատերազմի ավարտին ստեղծված, Անգլիայի ձեռքերում խաղալիք հանդիսացող, Ազգերի լիգայի քննարկման ոլորտը:

Անգլիացիների կողմից Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանությանն առնչվող Փարիզի խորհրդաժողովին, Սևրի Հայաստանին վերաբերող անիրականանալի հոդվածներին, Սան-Ռեմոյի և Լոնդոնի կոնֆերանսների ըն-

21 FO 371/1649/File № 233983.
22 FO 371/1649/File № 248179.
23 Տ. Տիգրանեան. Անգլիան եւ հայերը. Երևան, 1994, էջ 80–81:

դունած որոշումներին հաջորդեց 1923թ. Լոզանի կոնֆերանսը, որտեղ «Քերզոնն ու կոմպանիան խաչ քաշեցին Սան-Ռեմոյի և Սևրի հոդվածների վրա, հաշտության ձեռք պարզեցին քեմալական Թուրքիային, դիվանագիտության պատմությանը հանձնելով Հայկական հարցը»[24]:

Նախքան Լոզանի կոնֆերանսը, հայ ժողովրդի արդարացի պահանջները, այդ թվում նյութական փոխհատուցման հարցերը, լայն քննարկման առարկա էին դարձել Ազգերի լիգայում: Ազգերի լիգան, որի լույս աշխարհ գալու գաղափարը անգլիական քաղաքական խոհանոցում ծագել էր դեռևս Առաջին աշխարհամարտի ավարտին, հիմնադրվեց 1919թ. Վերսալի հաշտության պայմանագրով: Այդտեղ էլ ազդարարվեց վերջինիս հիմնադիր փաստաթղթի (ստատուտի) ընդունումը: Լիգայի խորհուրդը բաղկացած էր չորս մշտական անդամներից, դրա կազմի մեջ մտնում էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան: Բնական էր, որ գլխավոր որոշումների ընդունման և դրանց իրականացման լծակները, ինչպես նաև ամբողջ աշխարհում հետպատերազմյան միջազգային նոր իրավահամակարգի հաստատման բանալին գտնվում էին Անգլիայի ձեռքերում[25]:

Ազգերի լիգան 1922թ. քննության առավ հայ փախստականների և ցեղասպանության արդյունքում թուրքական քաղաքացիությունից զրկված հայ գաղթականների խնդիրը, առաջարկելով, ի գիտություն միջազգային հանրության, ընդունել «Նանսենյան անձնագիր» անձը հաստատող փաստաթղթի հասկացությունը, որը թույլ կտար հայրենիքը կորցրած յուրաքանչյուր հայի օգտվել որոշակի արտոնություններից, այդ թվում, Ազգերի լիգայի հովանու ներքո ստեղծվելիք «Ազգային օջախ» վերադառնալու հնարավորությունից:

Ինչպես հայտնի է, մեծ տերությունները, հանձինս Անգլիայի, վիժեցրեցին ոչ միայն Հայաստանի ազատագրման, այլ նաև իրենց իսկ կողմից որպես այլընտրանք առաջադրված «Ազգային օջախ» ստեղծելու գաղափարը: 1923թ. ի վեր ընդհուպ մինչև 1925թ.՝ Ազգերի լիգան արդեն քննարկում էր 320000 «Նանսենյան անձնագրեր» տրամադրել հայ գաղթականներին՝ նորաստեղծ ՀԽՍՀ-ում վերաբնակվելու համար: Ֆրիտյոֆ Նանսենը 1925թ. Խորհրդային Հայաստան կատարած այցից հետո, հանրապետության կացության վերաբերյալ հատուկ զեկուցագիր ներկայացրեց, որտեղ պնդում էր, որ անհրաժեշտ ֆինանսական աջակցության դեպքում, երկիրն ի վիճակի կլինի ընդունել 25000–30000 փախստական[26]: Այս նախաձեռնության կյանքի կոչումը հնարավոր կլիներ միայն ֆինանսական միջոցների առկայության պարագայում: Ուստի Ֆ. Նանսենը բարձրացրեց ցեղասպանության ընթացքում հայերից թալանված և ապա անգլիացիների կողմից առգրավված 5000000 թուրքական ոսկե ֆունտի ճակատագիրը: Այն սերտորեն կապված էր Առաջին աշխարհամարտում պարտություն կրած կայսերական Գերմանիայի նկատմամբ հաղթանակ տարած Անտան-

---

24 Ջ. Ս. Կիրակոսյան. Ռ. Գ. Սահակյան. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.). Երևան, 1972, էջ 62:

25 Дипломатический словарь, т. II, М., 1985, с. 145 — 146.

26 «Հայկական հարց: Հանրագիտարան». Երևան, 1996, էջ 17–18:

տի տերությունների կողմից գանձվելիք ռեպարացիաների խնդրի հետ: «Համաձայն Վերսալի հաշտության պայմանագրի, ստեղծվեց Միջդաշնակցային ռեպարացիոն հանձնաժողով: Բուն Վերսալի հաշտության պայմանագիրը չամրագրեց գերմանական ռեպարացիաների չափը: Այսինքն՝ Գերմանիան պետք է իր վրա պարտականություն վերցներ վճարելու այն ռեպարացիոն գումարը, որը արդյունքում սահմանելու էին դաշնակիցները:

Նախատեսվում էր, որ Գերմանիան պարտավոր է դաշնակիցներին վճարելու այն ոսկին ու թանկարժեք իրերը, որոնք նա պատերազմի ընթացքում ստացել էր Թուրքիայից, Ավստրո-Հունգարիայից և Ռուսաստանից»[27]: Միանշանակ էր, որ դրա մեջ էր մտնում այն 5000000 թուրքական ոսկե ֆունտը, որ Գերմանիայի պարտությունից հետո անգլիացիները գերմանական Ռայխսբանկից տեղափոխել էին Անգլիա[28]:

Վերսալի պամանագրի ստորագրումից անմիջապես հետո հիմնահարցը փոխագրվեց անգլիական պառլամենտ և դարձավ «հայանպաստ ուժերի» նախաձեռնած բուռն քննարկումների առարկա: Հայ ժողովրդին պատկանող և նրանից բռնազավթված սեփականության գրպանման հիմնահարցը սերտորեն կապված էր կառավարության և պառլամենտի անդամների միջև ծավալված ռեպարացիոն հարցերի շուրջ բանավեճերի հետ: Այսպես, 1921թ. փետրվարին գերմանացիների կողմից պատերազմի ընթացքում պատճառած վնասների նյութական փոխհատուցման առնչությամբ պառլամենտի անգամ պրն. Ռապեռը հանդես եկավ հարցապնդմամբ, փորձելով պարզել, թե «... արդյո՞ք Գերմանիան պարտավոր է բավարարել իր և իր դաշնակիցների նկատմամբ բրիտանացի քաղաքացիների կողմից ներկայացված բոլոր պահանջները». խոսքը Թուրքիայի և Բուլղարիայի մասին էր: Պատասխան խոսքով հանդես եկող արտաքին առևտրի նախարարի պառլամենտի գծով տեղակալ Պ. Լլոյդ Գրիմը նշում էր. «Բրիտանացի քաղաքացիների հայտարարագրված պահանջները Թուրքիայի նկատմամբ կազմում են 23000000 ֆունտ» և որ «Վերսալի պայմանագրով Գերմանիան չի կրում որևէ պարտավորություն թշնամի կամ նախկինում թշնամի հանդիսացող այն պետությունների քաղաքացիների նկատմամբ, որոնք պարտք են բրիտանացի քաղաքացիներին»[29], այսինքն՝ կառավարության անդամը քողարկում էր Գերմանիայից Անգլիա տեղափոխված անօրինական հանգիսացող 5000000 թուրքական ոսկե ֆունտի փոխանցումը:

1921թ. հունվարի 31-ի դրությամբ Գերմանիան ռեպարացիաների տեսքով հասցրել էր Անտանտի դաշնակից երկրներին փոխանցել 6055000000 ոսկե մարկ (303000000 անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգ) տուգանք, որից 22%-ը նախքան այդ կնքված Սպայի համաձայնագրով պետք է բաժին ընկներ Բրիտանական կայսրությանը: Պառլամենտի անդամ ռազմածովային ուժերի կապիտան-լեյտենանտ Յունգը հոխորտում էր, քննադատելով կառավարության ռեպարացիոն քաղաքականությունը: Նա իր դիրքորոշումն ամրապնդում էր նրանով, որ միայն 1920թ. դեկտեմբերի 31-ի

27 Дипломатический словарь, т. I, М., 1984, с. 195.

28 Տ. Տիգրանեան. նշվ. աշխ., էջ 86:

29 Hansards, House of Commons, 138 H. C., Deb. 5 s., p. 584.

տվյալներով գրավված տարածքներում անգլիական զորքերի պահպանման ծախսը կազմել էր 3530000000 ոսկե մարկ (177000000 անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգ) և, որ բոլոր ծախսերը հանած, հաղթանակած Անգլիան 1921թ. հունվարի 31-ի տվյալներով կարողացել էր ստանալ միայն 100000000 ֆունտ ռեպարացիոն դումար[30]:

Այս առումով առաջին լուրջ հարցադրումը բարձրացվեց և ուղղվեց Անգլիայի ֆինանսների նախարար Ռ. Հորնին խորհրդարանի անդամ Վայսի կողմից: Վերջինս պահանջում էր բացատրել, թե արդյո՞ք այն ոսկին, որ փոխանցվել էր Վիեննայից Լոնդոն (խորհրդարանի անդամը, ինչպես և շատ-շատերը տեղյակ չէին, որ գումարը փոխանցվել էր Բեռլինից) ուղղվելու էր մարելու համար օսմանյան պետական պարտքը: Անգլիական պաշտոնական անձանցից առաջինը ֆինանսների նախարար Ռ. Հորնը հրապարակայնորեն ընդունեց, որ դումարը ոսկով դեպոզիտագրված է եղել Ավստրո-Հունգարական բանկում «ապահովագրելու համար թողարկված առաջին թուրքական կառավարական թղթադրամները» և «քննարկվող ոսկին (5000000 թուրքական ոսկին) տեղափոխվել է Լոնդոն»: Այն չպետք է ներկայացվեր ռեպարացիոն հանձնաժողովի քննարկմանը և չպետք է օգտագործվեր Թուրքիայի կողմից Բրիտանական կայսրության նկատմամբ մինչ այդ գոյություն ունեցող պետական պարտքի մարման համար[31]: Փաստորեն, կառավարության խոսնակը պառլամենտի առջև բացեիբաց հայտարարում էր, որ ոչնչով չհիմնավորված ոսկե հաշվեհամարում գտնվող դումարի անօրինական փոխանցումը Լոնդոն և դրա յուրացումը հանդիսանում էր կառավարության կողմից որդեգրած պետական ֆինանսական հափշտակիչ քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Այստեղ առկա հակասությունը, կապված հոդվածի սկզբում անգլիական պաշտոնական արխիվների փաստաթղթերում հիշատակվող 1915թ. վերջին Գերմանիա տեղափոխված 5000000 թուրքական ոսկե ֆունտի ճակատագրի հետ և, թե ինչո՞ւ և ինչպե՞ս արդեն 1921թ. անգլիական պառլամենտում, ինչպես նաև այլ աղբյուրներում, որոնց մենք կանդրադառնանք ստորև, գերմանական Ռայխսբանկի փոխարեն նշվում է Ավստրո-Հունդարական բանկը, կարելի է բացատրել հետևյալ կերպ՝ 1. կամ անգլիական կառավարությունը փորձում էր մոլորության մեջ գցել հանրությանը, թաքցնելով այն վայրը, որտեղից Լոնդոն էր փոխանցվել և ապա անգլիացիների կողմից յուրացվել հայերին պատկանող թուրքական ոսկին, 2. կամ պատերազմում Թուրքիայի դաշնակից Ավստրո-Հունդարիայի և Գերմանիայի միջև կայացած որևէ համաձայնությամբ, նախքան պատերազմի ավարտը, ոսկին Ռայխսբանկից տեղափոխվել էր Ավստրո-Հունգարական բանկ, հավանաբար այն մտահոգությամբ, որպեսզի հնարավոր լիներ քողարկել գումարի ստացման սկզբնական վայրը և ծագման աղբյուրը՝ այն հետագայում Թուրքիա վերադարձնելու կամ Անտանտի տերությունների ռեպարացիոն գանձումներից թաքցնելու համար:

---

30 Hansards, House of Commons, 140 H. C., Deb. 5 s., p. 8-9, (1921թ. գրությամբ արտարժութային փոխարժեքով մեկ անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգը հավասար է եղել 20 գերմանական ոսկե մարկի):

31 Hansards, House of Commons, 144 H. C., Deb. 5 s., p. 215.

Անհրաժեշտ է նշել, որ ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդից թալանված և այնուհետև անգլիացիների կողմից յուրացված նյութական կորուստների և դրա համար պատասխանատվության ենթարկման խնդիրն այլևս չբարձրացվեց անգլիական պառլամենտում:

1923թ. հուլիսի 23-ին Լոզանի պայմանագիրը ստորագրելուց հետո[32], երբ արդեն եվրոպական տերությունները հաշտության ձեռք պարզեցին «նոր մտածող» Քեմալ Աթաթուրքին, թուրքական պառլամենտը սեպտեմբերին վավերացրեց այն դաշնագիրը, որով հայրենիք վերադառնալու իրավունքից զրկեց Կիլիկիայից և արևելյան վիլայեթներից «տարագրված» հայերին: Քեմալական Թուրքիայի թերթերը 1925թ. դեկտեմբերի 26-ին հրապարակեցին կառավարության հայտարարությունը, թե հաշվի առնելով այն, որ հայերին պատկանող «լքյալ ունեցվածքի» անհամակարգված վաճառքը վնաս է հասցնում երկրին, որոշված է ստեղծել հատուկ մարմիններ, որոնք պետք է դնահատեին հայերի թողած շարժական և անշարժ ողջ գույքն ու այլ ունեցվածքը՝ հետագայում աճուրդի միջոցով իրականացնելով գրանց վաճառքը[33]: Սրանով, փաստորեն, «վերածնված Թուրքիան» շարունակելու էր այն գործընթացը, որն իրականացրել էր նախորդ իթթիհադական կառավարությունը՝ պետական մակարդակով յուրացնելով բնաջնջված տարրի սեփականությունը:

Մեծ Բրիտանիայի պաշտոնատար անձինք Լոզանի դաշնագիրը Թուրքիայի կողմից վավերացնելուց անմիջապես հետո՝ 1924թ. սեպտեմբերի վերջերին, բարձրացրեցին իրենց իսկ պետության կողմից յուրացված 5000000 ոսկու հետագա ճակատագրի հարցը[34]: Անգլիայի պահպանողական կուսակցության առաջնորդ լորդ Սթենլի Բոլդուինը, լիբերալ կուսակցության ղեկավար Հերբերտ Ասքուիթը և պառլամենտի անդամ Նոել Բեքսթոնը կազմեցին և իրենց ստորագրությամբ հուշագիր ներկայացրեցին վարչապետ ընտրված լեյբորիստական կուսակցության առաջնորդ Ռամզի Մակդոնալդին. «...ստիպողաբար բացատրելով, որ Մեծ Բրիտանիան պարտավոր է մի մեծ գումար տալ՝ օգնելու Հայաստանում, Բալկաններում և այլ երկրներում գտնվող հայ գաղթականներին»: Այն, թե ինչու էր պետք գա անել, ձևակերպվում էր հետյալ կերպ. «1. Որովհետև պատերազմի ընթացքում և զինադադարից հետո դաշնակից և նրանց հարող տերությունների պետական գործիչները մի քանի անգամ երաշխիք են տվել հայ ազգի ազատագրման ու անկախության մասին: ...2. Որովհետև 5000000 ֆունտ ստեռլինգը (թուրքական ոսկի), որ թուրքական կառավարությունը 1916թ. (1916թ. Մեծ Բրիտանիայի վարչապետը նույն Ասքուիթն էր, որը, թերևս, բոլորից ավելի իրազեկ էր դրամի և նրա ծագման աղբյուրների մասին) պահ էր տվել Բեռլինում, և զինադադարից հետո վերցվել էր դաշնակիցների կողմից, մեծ մասամբ (գուցե և ամբողջովին) հայերի դրամն է»: Հուշագիրը կազմողները փաստաթղթի վերջում նշում էին, որ հայերին տրված, բայց երբեք չիրականացված խոստումների համար իրենք կրում են բարոյական պատասխանատվություն, պահանջելով

32 Ֆ. Ն ա ն ս ե ն. Հայաստանը և Մերձավոր Արևելքը. Երևան, 1991, էջ 172:
33 Յ ո ւ. Բ ա ր ս ե ղ ո վ. Նշվ. աշխ., էջ 14–15:
34 Տ. Տ ի գ ր ա ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 87: Ֆ. Ն ա ն ս ե ն. Նշվ. աշխ., էջ 173:

բրիտանական կառավարությունից «...մի կարևոր շնորհ» անել հայերին՝ վերադարձնելով առգրավված ոսկին[35]: Այս դիմումը ներկայացնելուց շատ չանցած, երբ Սթենլի Բոլդուինը, որը փոխարինեց Ռամզեյ Մակդոնալդին վարչապետի պաշտոնում, հրաժարվեց որևէ գումար տրամադրել «...հայ ազգի կամ գաղթականների համար, որոնց իր իսկ կազմած հուշագրով «բարոյապես պարտ էր» որոշ փոխհատուցում»[36]:

«Նպատակն արդարացնում է միջոցը» կարգախոսի բոլոր սկզբունքներին հավատարիմ և հետևորդ Սթենլի Բոլդուինի վարքագծին հակառակ դիրքորոշում էր որդեգրել վերջինիս որդին՝ Օլիվեր Բոլդուինը, որը 1925թ. հրատարակած «Վեց բանտ և երկու հեղափոխություն» մենագրության մեջ բնութագրում էր Լոզանի կոնֆերանսում իր երկրի բռնած դիրքը, որպես «...Հայաստանի դավաճանություն» և «...հայ ժողովրդի լքում»[37]:

Անգլիացիների կողմից առգրավված 5000000 ոսկե ֆունտի ճակատագրին երկու տասնամյակ անց՝ 1944թ. հոկտեմբերի 10-ին, Սթենլի Բոլդուինին հղած նամակով անդրադարձավ Մարի Թերզյանը, որը խնդրում էր իրեն տրամադրել Ս. Բոլդուինի Հ. Ասքուիթի ստորագրությունը կրող այն հուշագրի պատճենը, որը նրանք ներկայացրել էին Ռ. Մակդոնալդին, որպեսզի ինքը կարողանա օգտագործել այն իր գրքի մեջ[38]: Մարի Թերզյանի նամակը ստանալուն պես Բոլդուինը, հանկարծակիի գալով, շտապ նամակ է դրում այն ժամանակ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ջ. Կադոգանին: Կցելով հայ կնոջ նամակը, Բոլդուինն արդեն «ողջ պատմությունը անհեթեթություն» է համարում: Կադոգանը, իր հերթին, խորհուրդ է տալիս վերջինիս Թերզյանին չտրամադրել 1924թ. կազմված հուշագրի պատճենը: Բայց քանի որ Մարի Թերզյանը կարող էր ձեռք բերել վաստաթուղթը ԱՄՆ Կոնգրեսի արխիվներից, առաջարկում է որքան հնարավոր է մոլորության մեջ գցել մենագրության հեղինակին, որակելով հա-

35 Ֆ. Ն ա ն ս ե ն. նշվ. աշխ., էջ 174–175:

36 Նույն տեղում, էջ 176:

37 A r a m P. A i v a z i a n. Armenia: Usurped by Genocide and Treachery. Documentary-Protest of a Survivor, Montreal, 1992, p. 312–321. Երեք անգամ Մեծ Բրիտանիայի վարչապետ ընտրված Սթենլի Բոլդուինի (1867–1947թթ.) որդին՝ Օլիվեր Բոլդուինը մեծապես քաջատեղյակ էր Թուրքիայի ողջ տարածքում և Անդրկովկասում իրականացված Հայոց ցեղասպանության փաստին և այն սարսափելի վիճակին, որոնց պայմաններում իրենց գոյությունն էին քարշ տալիս ամեն օր մահացող հայ գաղթականները: Վերջինս ծառայել էր նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բանակում որպես սպա և հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունից հետո գերվել քեմալականների կողմից: Գրեթե երկամյա թուրքական բանտարկության մեջ գտնվելուց հետո, միայն 1921թ. անգլիացիների և քեմալականների միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում, նրան, ի թիվս այլ անգլիացի ռազմագերիների (դրանց թվում էր նաև լորդ Քերզոնի փեսան), փոխանակեցին Մալթայում պահվող պատերազմի հանցագործ երիտթուրք պարագլուխ ռազմագերիների հետ: Վերադառնալով հայրենիք, ականատես լինելով այն արկածախնդիր քաղաքականությանը, որը որդեգրել էին իր երկրի կառավարողները՝ Օլիվեր Բոլդուինը ձեռնամուխ եղավ իր իսկ աչքերով տեսած հայ ժողովրդի ապրած սարսափների շարադրմանը մենագրության տեսքով: Լոզանի պայմանագիրը համարելով «...ամենամթին, ծուղակային ու անբարոյականը, որը երբևէ ստորագրել է Անգլիան»՝ նա խարդանում էր Անգլիայի (և իր հոր) վարած հակահայկական ու դավադիր քաղաքականությունը, որի արդյունքում ժողովուրդը 1 միլիոն հայեր կորցնելուց հետո ղրկվեց հայրենիքից: Մեջբերելով անգլիացի բանաստեղծ Ջարլզ Սվինբուրնին՝ նա հայոց ճակատագիրը համարում է «...անափ ծով»: Օլիվեր Բոլդուինի մենագրությունը հանդիսանում է Ալբիոնի դրսևորած հայադավ վերաբերմունքի ժամանակագրական և փաստագրական մանրամասն ու օբյեկտիվ շարադրանքը:

38 FO 371/42210/ File № X/P 06079.

յերին իրավամբ պատկանող գրամը, որպես գումար, որն իսկապես 1916թ. Թուրքիայից տեղափոխվել է Բեռլին և Վիեննա, ապահովագրելու համար թուրքական կառավարության կողմից թողարկվող առաջին թուրքական թղթադրամների արտադրությունը և «...որ որևէ հավանականություն գոյություն չունի, որ այն հանդիսանում է բռնագաղթված հայերի սեփականությունը»[39]:

Երկրորդ նամակը, որը վերաբերում է Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդրին, նույնպես պահվում է Մեծ Բրիտանիայի պաշտոնական արխիվներում: Այն շարադրվել է 1945թ. հունիսի 30-ին[40], այն ժամանակ, երբ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած դաշնակիցները Պոտսդամի կոնֆերանսում վճռում էին Հրեական ողջակիզման կազմակերպիչներին և մեղսակիցներին միջազգային արդարադատությանը հանձնելու և հրեա ժողովրդի կրած նյութական, ինչպես նաև բարոյական կորուստների և վնասների փոխհատուցման հարցերը: Օրիորդ Ջեորջիա Գաթլերը Վաշինգտոնում հավատարմագրված Անգլիայի դեսպան լորդ Հալիֆաքսին ուղարկած գրության մեջ փորձում էր պարզաբանումներ ստանալ, թե ի՞նչ եղավ 1916թ. Թուրքիայից Բեռլին՝ Ռայխսբանկ, այնուհետև Լոնդոն փոխանցված այն «...5000000 ֆունտը, որը պատկանում է հայերին»[41]: Հայերի ունեցվածքի ու սեփականության վերադարձմանն ուղղված այս և նմանատիպ դիմումներն ու խնդրագրերը անգլիական իշխանությունների կողմից մնում էին կամ անպատասխան, կամ էլ ինչպես Մարի Թերզյանի դեպքում, բացառիկ կարգով կեղծված և ճշմարտությունը թաքցնելուն միտված:

Ահա այսպիսին է Մեծ Բրիտանիայի կողմից Հայկական հարցի միջազգայնացումից ի վեր տրված ոչ միայն քաղաքական խոստումներից հրաժարումը, այլև հայերի բնաջնջման հետևանքով կրած նյութական պատասխանատվության և փոխհատուցման հայ ժողովրդի իրավացիորեն ներկայացրած պահանջների ուրացումը:

Առաջին աշխարհամարտում հաղթանակած Մեծ Բրիտանիան նախկինում ստանձնած իր պարտավորություններով ոչ միայն պարտավոր էր միջազգային արդարադատությանը հանձնելու սպանդ կազմակերպած իթթիհադական կուսակցության բոլոր անդամներին, այլ նաև ցեղասպան պետությունից պահանջելու փոխհատուցել (ինչպես նա այդ արեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, նացիստական կուսակցության կողմից իրականացված Հրեական ողջակիզման հետևանքով հրեա ժողովրդի կրած նյութական կորուստների փոխհատուցման դեպքում, և այսօրվա Գերմանիայի կառավարությունը դեռևս կրում է այդ պատասխանատվությունը՝ պարբերաբար հրեաներին վճարումներ կատարելով) դրա հետևանքով հայերից թալանված ունեցվածքը: Փոխարենը, 1920-ական թվականներին արդեն քեմալական Թուրքիային հաշտության ձեռք պարզած անգլիական քաղաքական մեքենան մասնակից դարձավ թալանի այդ գործին՝ Գերմանիայից Լոնդոն փոխանցելով և այնուհետև յուրացնելով

39 FO 371/10214/File № X/P 6098.
40 *Տ. Տիգրանեան. նշվ. աշխ., էջ 88:*
41 FO 371/48795/File № R 12375.

թուրքերի կողմից հայերից թալանված և Գերմանիայում պահ տրված 5000000 թուրքական ոսկե ֆունտը: Ավելին, անգլիական պետական այրերը խոչընդոտում էին անգլիական տարբեր մասնավոր ընկերությունների և անձանց կողմից մինչ պատերազմը հայերի նկատմամբ ստանձնած ֆինանսական պարտականությունների կատարմանը. դրա պերճախոս վկայությունն է, ինչպես տեսանք, կյանքի և ունեցվածքի ապահովագրման Սթար Աշուրանս ընկերության օրինակը: Անգլիական ընկերությունների կողմից հայերի կյանքը ապահովագրող հարյուրավոր (միգուցե նաև հազարավոր) պայմանագրերով այդպես էլ մինչ օրս ոչ մի վճարում չի իրականացվել:

Այս է պատմական դաժան իրողությունը: Բայց իրողություն է նաև այն, որ պատմության ամենածանր փորձություններով անցած հայ ժողովուրդը երբեք չի հուսահատվել: Այսօր էլ նա հավատում է ոչ միայն իր պապերի դարերով կուտակած և թշնամու թալանած սեփականության վերադարձմանը, այլև Հայկական հարցի քաղաքական լուծմանը:

ВОПРОС МАТЕРИАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ГЕНОЦИД АРМЯН И ВЕЛИКОБРИТАНИЯ (1915-1924 гг.)

ТИГРАН САРУХАНЯН

Р е з ю м е

В статье рассматривается вопрос о финансовых аспектах ответственности за Геноцид армян в контексте политики Англии 1915—1924 гг. Во время Первой мировой войны депозитированные в немецком Райхсбанке деньги армян были переведены в Лондон и присвоены британским правительством. Вместо того, чтобы возвратить деньги их первоначальным владельцам-армянам, Великобритания запретила собственным страховым компаниям платить по страховым договорам тем оставшимся в живых наследникам, предки которых застраховали свою жизнь и имущество до войны. Первоначальные запросы к британскому правительству по поводу судьбы 5 000 000 турецких золотых фунтов и к британским страховым компаниям не принесли никаких положительных результатов. Следовательно, вопрос о материальной ответственности за Геноцид армян до сих пор не решен.

THE QUESTION OF FINANCIAL RESPONSIBILITY FOR THE ARMENIAN GENOCIDE AND GREAT BRITAIN (1915-1924)

TIGRAN SARUKHANYAN

S u m m a r y

The article examines the large aspects of financial responsibility for the Armenian Genocide, in the context of policy of England in 1915–1924 which forced the crime to become not only

politically, but also financially denied and rejected. Moreover, the British Government, its politicians, financiers and diplomats were largely engaged in the process of pocketing 5 000 000 Turkish pounds in gold, which was robbed by the Turkish Government from the Armenians during World War I, deposited in German Reichsbank and, then transferred to London and, appropriated by the former. Instead of returning the money to its original owners, the Armenians, Great Britain forbade her insurance companies to settle the claims for all the surviving inheritors, whose ancestors had insured their lives and property before the War. The initial contacts, as in the case of the British Government concerning the fate of 5 000 000 Turkish pounds in gold and, with British insurers had not yielded any affirmative response. Therefore, the question of the financial responsibility for the Armenian Genocide has not been solved yet.